

բժիշկներու վերատեսուչը կը համարուի: Այսուհետեւ ա՛լ մի զարմանար, թէ ինչո՞ւ ընդհանրապէս շատ համբաւ կստանան այն բժիշկներն, որք ընդհանրապէս շատ մարդ կմեռցունեն. վասնզի անոնք *Հրեշտակապետին* պաշտպանութիւնը կը վայելեն:

Հրեշտակապետն էր, որ հոգին առաւ Ռոտոսթոյի առաջնորդ Թադէոս եպիսկոպոսին, որուն մարմինն յիշեալ եկեղեցոյն մէջ թաղուած է: Եթէ գիտնայինք, որ Հրեշտակապետն մամլոյ ազատութիւնն կյարգէ՝ կ'իմացունէինք իրեն, որ այս ընտրութեան մէջ սխալած է. վասնզի Թադէոս եպիսկոպոսն ազգին շատ վնասակար – որովհետեւ բնաւ վնասակար չեղողը չկայ – կրօնաւոր մը չէր, եւ եթէ Հրեշտակապետն անպատճառ որոշած էր կրօնաւորի մը հոգին առնել՝ մենք կրնայինք իրեն ներկայացնել քառասուն ընտրելիներ, որոնցմէ իւր ուզածն կարող էր անդիի աշխարհ դրկել:

Այս եկեղեցոյն մէջ ատենօք տասնեւութ քահանայ կապրէր, իսկ հիմայ միայն հինգ քահանայ անօթութենէ կմեռնի... ձեզի կթողում թաղեցոյն ջերմեռանդութեան հաշիւն ընել:

Պալատ ունի մանչերու թաղային վարժարան, ուր հարիւր ութսուն աշակերտ կ'երթայ: Կայ նաեւ աղջիկներու թաղային վարժարան մը, որ ութսուն աշակերտ ունի: Երկու վարժուհի, ինը դասատու, մէկ տեսուչ եւ քառասուն ոսկի օսմանեան՝ կկառավարեն այս երկու վարժարանները: Այս քառասուն ոսկիին քսանը եկեղեցիէն կը վճարուի, տասներկուքը աշակերտներու թոշակէն եւ մնացած ութը ոսկին հոգաբարձութենէ, որ բնաւ չդադրիր վիճակ հանելէ եւ նուիրատոմս տպել տալէ յօգուտ այս վարժարանին:

Հոս թաղական կ'ընտրուին միշտ այն անձերն, որոնց մազն ու մօրութիւնը ճերմկցած են. իսկ երբ սեւ մազերով ու պեխերով մարդեր թաղական ընտրուին՝ ընտրութիւնն ապօրինաւոր կհամարուի: Այս սովորութիւնն եթէ իւր վնասն ունի՝ սա օգուտն ալ ունի, որ շատերը, թաղական ընտրուելու փափաքով, իրենց մազերն ու պեխերը չեն ներկեր:

Պալատու մէջ կար ժամանակաւ *Ժողովրդասէր* անուամբ ընկերութիւն մը, որուն անունը վերջէն *Շահասէր*օի փոխուեցաւ եւ որուն քանի մը հարիւր ոսկիներն քանի մը ազգասէր ստամոքսներու մէջ հալեցան: Հիմայ *Աղքատասէր* անուամբ *ընկերութիւն* մը կայ, որ Ս. Ծնունդին եւ Զատիկին օրերը թաղին աղքատներուն կբաժնէ տարուան մէջ հաւաքուած գումարը եւ տարին երկու օր կխնդացնէ թաղին աղքատները: